ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"30" դեկտեմբերի 2024թ. N 3265-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում գրանցված որոշ օդանավ շահագործողներին կանոնավոր օդային հաղորդակցություններ իրականացնող փոխադրողներ նշանակելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 25.10.2024 թվականի N 2559-Ա հրամանը և «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ Ե/281-24 գրությունը:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնությունը նվազման կարգով տրամադրել ստորև նշված ավիաընկերության օդային տրանսպորտով մեկնող ֆիզիկական անձանց.

1) «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերություն (Երևան-Լառնակա-Երևան 28.10.2024թ. մինչև 22.06.2025թ.):

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

12/30/2024

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան